


Այն հաւատար բաղմախօսաց .
 Աոր ինչ յաւէտ և սրտմտողաց .
 Օ ի փորքը հաւատ բաղմասողաց ,
 Ետուն խոհեմք միշտ այնպիսեաց .
 Երբ դու արբեր գինի նուազ ,
 Ի եր դու յաւէտ քեզ դատախազ .
 Քանզի գինւոյն չէ ինչ մնաս ,
 Եւ ըմպողին է միշտ մառազ .
 Վաղանի խորհուրդ քոյոյ սրտի ,
 Վեր ՚ի սիրան բարեկամի .
 Եւ զողջութիւն մարմնոյդ բժըշկի ,
 Վեր ՚ի ձեռս հաւատար մի .
 Օ ձախորդութիւն պատահաբար ,
 Մի կրեսցես դու սրտմաբար .
 Բաղդին է չար նետ գաղտաբար ,
 Օ ի հարկանէ ու ժեղաբար :
 Վու զպառնիս յառաջ գիցես ,
 Եւ զգուշութեամբ միշտ քննեսցես .
 Քանզի սակաւ մնաս կրեսցես ,
 Երբ զհանդերձեալս դու շակեսցես :
 Այն յաջողմանց ՚ի մէջ բաղմաց ,
 Մի կորուսցես զգոյն երեսաց .
 Պահեա զյոյսն ՚ի մէջ մըտաց ,
 Օ ի ժամ մահու է ՚ի կարեաց .
 Օ ինչ է բարին ծանօթ գողով ,
 Մի բնկեսցի աւուրբ միով .
 Օ ի դէպ ժամուն ճակատն հերով ,
 Բայց հերթափ բնաւ յետնով :
 Օ ինչ հետեւի զայն հագասցես ,
 Եւ զգալոցն յառաջ տեսցես .
 Եւ զյետինն նախ միշտ քննեսցես ,
 Եպա խոհեմ զանձնդ արասցես :
 Օ ի դու իցես ՚ի զօրութեան ,
 Երբեմն զքեզ տուր ճշդութան .
 Սակաւ է պարտ տալ ինդութեան ,
 Բաղում յաւէտ յառողջութեան :
 Այն ցրեր բաղմաց զգատաստան ,
 Չհաւանիս քոյին միայն ,
 Անարգողացն որ է նրման ,
 Սա չէ երբէք հաճոյական .
 Վոյ մանաւանդ հոգածութիւն ,
 Ի իցի յաւէտ ՚ի փրկութիւն .
 Եւ մանակին չիք մեղադրանք ,

Երբ դու քեզ տաս մեծ տառապանք ,
 Հոգ մի լիցի ՚ի յերազոց ,
 Օ ի մտք հակէ յանկացելոց .
 Օ ինչ յոյս իցէ հասկացելոց ,
 Եյն գող փախաք նիրհեցելոց :
 (Երբնայիւ)




ՊՊՐՈՅԱԿԱՆ ԱՐԴԻԻՆՔ

Վիտեմբ ՚ի փորձոյ թէ՛ որ և իցէ
 աշխատութիւն մի աւելի կը քաջալե-
 բուի երբ ՚ի տես հասարակութեան
 դրուելու լինի այն : Աւ որովհետեւ
 բնական է մարդոյս անձնասիրութիւ-
 նը և գովութիւն լսելու սէրը , մա-
 նաւանդ երբ տղայ հասակի մէջ է ,
 ուստի երբ կը տեսնէ որ իւր վաս-
 տակները հասարակութեան զիմաց
 կը դրուին , թէ և կարեորութիւն մի
 տրուելու չըլլայ անոնց , և ոչ ուշադ-
 րութեան արժանի համարուին , այ-
 սու ամենայնիւ համբակ մի միշտ այն
 հրատարակութեան մէջ իրեն անձ-
 նասիրութիւնը շողբորթոյ և զինքը
 գովաբանող լեզուներ երեւակայելով
 կը գրգռուի և դիպի յառաջ երթա-
 լու մղում մի կ'ունենայ : Այս դե-
 տաւորութեամբ է որ յանձն առինք
 Այսին մէջ հրատարակել սուրբ Աթու-
 ոսոյս Վարդի գրաւոր աշխատութիւն
 ները , թէ հեղինակութիւն և թէ
 թարգմանութիւն , ինդրելով կան-
 խաւ բանասէր ընթերցողներէն՝ որ
 իրենց ներողամտութեամբը ընդու-
 նին՝ թէ և ուշադրութեան արժանի
 նիւթ մի չգտնեն անոնց մէջ : Վա-
 ջալերութիւնը մեծ դաս մի է ազգաց
 յառաջադիմութեանը :
 Հետագայ առաջին յողուածը գը-
 րողը Արիւղտոսի ազգայիններէն մե-

Տոպոսի. և բարեպաշտոն Պօղոս է-
 Ֆէնտի կորսապետեանի որդեգիրն է,
 ազգաւ Աթմովպացի, որ թէպէտ և
 շատ տարի չէ գւարտն ընդունուիլը,
 սակայն խիստ մեծ յոյսեր կուտայ
 ուսմանց մ. ջ զարգանալու. և սրգէն
 համեստ և հեզ բնաւորութեամբը
 սիրելի եղած է իւր դաստիարակաց-
 անշուշտ օր մի մեծ պատիւ պիտի
 ընէ նաեւ իւր Աթմապատիւ հայրա-
 դրին, որ իւր զարգացմանը համար
 ամենեւեմ բան մի չննայեր:

Պարտք կը համարիմ՝ արդէն ծա-
 նուցանելու՝ որ սոյն հեղինակութիւն-
 ները սրբազրուած չեն իրենց դա-
 սատուներէն, բայց ՚ի բանի մի աննը-
 շան տառասխաններէ:



Խ Ո Կ Ո Ւ Մ Ն Մ Ա Հ Ո Ւ

«Չիք ստոյգ բան զմահ, և չիք
 անստոյգ բան զօր և զժամանակ մա-
 հուն, որում այր խոհեմ ոչ է ան-
 ծանօթ, զի քաջ գիտէ՝ թէ ամենայն
 վայրկեան է ժամանակ մահու իւրոյ»:

Այր՝ որ զմտու ամէ յամենայն
 ժամ թէ զինչ էր, զինչ եղեւ, եւ
 զինչ լինելոց է, ոչ երբէք մեղանչէ,
 ըստ բանի իմաստնայն թէ՝ «Յիշեալ
 զվախճանքս, և ոչ մեղիցես յուի-
 տեան» կամ՝ «Յիշեալ զօր մահու
 և զդատաստանին»։ Բանզև զինչ է
 մարդ, և զինչ կեանք նորա ՚ի մէջ
 անցաւոր և վշտալից աշխարհիս այ-
 սորիկ. ոչ ապարէն հող եմք մէք և
 մոխիր, և կեանք մեր անցանէ իբրեւ
 զհեաս ամսոց, և թառամի վաղիւ-
 զակի որպէս ծաղիկ վայրի, Չոր սե-
 սեալ հոգւոյ ակամբ Աստուածահայր
 մարգարէն Վաւիթ, ազաղակեր ա-

սելով: «Արպէս ծաղիկ վայրի այնպէս
 ծաղիկի, չնչէ ՚ի նմա հողմ, և ոչ է,
 և ոչ եւս երեւի տեղի նորա»: Իսկ
 արդ՝ եթէ սկիզբն մեր ՚ի հողայ է, և
 կեանքն մեր վաղաթառամ և լի զա-
 նաղան վշտօր, և մահ մեր տարածամ
 և ելք մեր չարաչար, սպա ուրեմն
 զինորդ ոչ խոհայցեմք զօր մահուն և
 զդատաստանին. և զինորդ սպակա-
 նելի և չարաշուք մարմնոյս և եթ
 կոյցեմք ՚ի ծառայութեան. ոչ ապա,
 քէն բնութիւնն իսկ կշտամբեալ
 յանդիմանէ գմեղ, եթէ ստեղծաք
 մերկ, եւ եթէ ՚ի դրախտին եղաք
 մերկ, և եթէ ՚ի դրախտէն արտաքս
 եկաք մերկ, և եթէ անգրէն յերկիր
 մերկանդամ երթալոց եմք, որպէս ա-
 սե մեղուարանն մեր սուրբն Աղի-
 չէ: Ապա ով հետեւողք Բրիտտաի,
 մի մարմնոյ տկար և ազօտ ակամբ հայե-
 ցեալ զերեւելիս և եթ նկատեսցուք,
 որպէս առնեն հեթանոսք, այլ հո-
 գւոյ ակամբ հայեցեալ տեսցուք զի-
 մանախան, և զհետ լիցուք փութով
 անանց կենացն, որ արդարոց՝ այսինքն
 զանցաւոր զխարուսիկ պատրանս աչ-
 խարհիս արհամարհողաց միայն է
 պատրաստեալ: Բանզև նորա ոչ պատ-
 րեցան ՚ի վաղանցուկ և յառժամեայ
 զուարճանաց կենցաղոյս, այլ գիտա-
 ցեալ եթէ ինքեանք ոչ են յաշխարհէ
 տառի, որպէս ասաց Տէրն թէ՝ «Ար-
 պէս ես չեմ յաշխարհէս, նոյնպէս և
 նորա չեն յաշխարհէս», այլ օտար և
 սրանդուխտք են յանցաւոր երկրիս.
 ուստի արհամարհեցին զխարիս կեն-
 ցաղոյս, և հողւոյ ակամբ հայեցեալ
 տեսին զանանց և զառանց վշտաց եր-
 կիրն՝ ուր կան և թագաւորեն միշտ
 ճշմարտութիւն, սէր և միութիւն:
 Արհամարհեցին եւ զկենցաղս զայս՝
 ուր կան և թագաւորեն խեռ, ատե-
 լութիւն և նախանձ, և թողեալ զամ՝